



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

« 19 » հուլիսի 2013թ.

թիվ 597-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի ԹԻՎ 39-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՅՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի
Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերը, ինչպես նաև հաշվի
առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի
20 - ի N 649-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011
թվականի դեկտեմբերի 22-ի N 1852-ն որոշման մեջ կատարված փոփոխությունները՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի հունվարի 18-ի
<<Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի
լիցենզավորման պայմանների և պահանջների հսկողության տեսչության կողմից ստուգման
ենթակա տնտեսավարող սուբյեկտների գործունեություններում ռիսկայնության հաշվարկման և
գնահատման կարգը հաստատելու մասին>> թիվ 39-Ա հրամանում (այսուհետ՝ Հրաման)
կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունները.
 - 1) Հրամանով հաստատված <<Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարության աշխատակազմի լիցենզավորման պայմանների և պահանջների
հսկողության տեսչության կողմից ստուգման ենթակա շահումով խաղերի և (կամ)
խաղատների, ինչպես նաև վիճակախաղերի կազմակերպիչների գործունեություններում
ռիսկայնության հաշվարկման և գնահատման կարգ>>-ի (հավելված 1) (այսուհետ՝ Կարգ) 4-րդ
կետում նշված բանաձևը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

<< $\Omega = \mathbf{F} / 100 \times 50 + \mathbf{Y}$ >>,


- 2) Հրամանով հաստատված <<Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի լիցենզավորման պայմանների և պահանջների հսկողության տեսչության կողմից ստուգման ենթակա շահումով խաղերի և (կամ) խաղատների կազմակերպիչների գործունեություններում ռիսկայնությունը որոշող չափանիշների սահմանները, դրանց համար բալերի, չափերը և բալերի բաշխումն ըստ ռիսկայնության միջակայքերի սահմանող աղյուսակ>>-ը (հավելված 2) շարադրել նոր խմբագրությամբ համաձայն հավելված 1-ի.
 - 3) Հրամանով հաստատված <<Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի լիցենզավորման պայմանների և պահանջների հսկողության տեսչության կողմից ստուգման ենթակա վիճակախաղերի կազմակերպիչների գործունեություններում ռիսկայնությունը որոշող չափանիշների սահմանները, դրանց համար բալերի չափերը և բալերի բաշխումն ըստ ռիսկայնության միջակայքերի սահմանող աղյուսակ>>-ը (հավելված 3) շարադրել նոր խմբագրությամբ համաձայն հավելված 2-ի.
2. Հրամանում կատարել հետևյալ լրացումը.

- 1) Կարգի 4-րդ կետի 3-րդ պարբերությունը լրացնել նոր 'նախադասությամբ' հետևյալ բովանդակությամբ.

<<Ընդ որում հավելված 2-ի և 3-ի աղյուսակներին համապատասխան բալերը հաշվարկելիս ռիսկայնության աստիճանը որոշող նույն չափանիշում մի քանի դեպքերի առկայության ժամանակ հիմք է ընդունվում այդ դեպքերի համար առանձին-առանձին հաշվարկված բալերի հանրագումարը:>>:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:
4. Սահմանել, որ սույն հրամանով կատարված լրացումը և փոփոխությունները հիմք են հանդիսանում 2013 թվականի հունվարի 1-ից հետո Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի լիցենզավորման պայմանների և պահանջների հսկողության տեսչության կողմից իրականացված հսկողության արդյունքում շահումով խաղերի, խաղատների և վիճակախաղերի կազմակերպիչների գործունեություններում ռիսկայնության աստիճանը որոշելու համար:

ՆԱԽԱՐԱՐ



ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված 1
 Հայաստանի Հանրապետության
 ֆինանսների նախարարի
 2013 թվականի հունիսի 19-ի
 N 597-Ն - Ա հրամանի

«Հավելված 2
 Հայաստանի Հանրապետության
 ֆինանսների նախարարի
 2012 թվականի հունվարի 18-ի
 N 39- Ա հրամանի

ԱՂՅՈՒՍԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՀԱՆՁՆԵՐԻ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ԽԱՂԱՏՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ, ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐ ԲԱԼԵՐԻ ՉԱՓԵՐԻ ԵՎ ԲԱԼԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԿԱՅՔԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՂ

N	Ռիսկի աստիճանը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը և դրանց սահմանները	Ռիսկի աստիճանը որոշող չափանիշների սահմանները (1-5)	Ռիսկի աստիճանը որոշող չափանիշների կշիռը (1-3)	Ռիսկի աստիճանը (բալ) (3-րդ սյունակ X 4-րդ սյունակ)
1	2	3	4	5
1. Նախորդ տարվա արդյունքներով շրջանառությունը				
ա)	մինչև 30 մլն.	1	3	
բ)	30 մլն.-ից ավել մինչև 50 մլն.	2		
գ)	50 մլն.-ից ավել մինչև 100 մլն.	3		
դ)	100 մլն.-ից ավելի	4		
2. Կազմակերպչի կողմից կազմակերպած շահումով խաղերի և (կամ) խաղատների քանակը				
ա)	մեկ խաղատուն	3	2	
բ)	մեկից ավել խաղատուն	4		
գ)	մեկ շահումով խաղի սրահ	1		
դ)	երկու շահումով խաղի սրահ	2		
ե)	երեք շահումով խաղի սրահ	3		
զ)	երեքից ավելի շահումով խաղի սրահ	4		
3. խաղասրահի մակերեսը				
ա)	մինչև 30 քմ.	1	1	
բ)	30 քմ.-ից ավել մինչև 100 քմ.	2		
գ)	100 քմ.-ից ավել մինչև 300 քմ.	3		
դ)	300 քմ.-ից ավելի	4		
4. իրականացվող շահումով խաղերի հնարավոր քանակն ըստ շահումով խաղերի կազմակերպման և անցկացման կանոնակարգի				

ա)	մինչև 15 մեքենայացված խաղ	1	1	
բ)	15 մեքենայացված խաղից մինչև 20 մեքենայացված խաղ	2		
գ)	20 մեքենայացված խաղից մինչև 80 մեքենայացված խաղ	3		
դ)	80-ից ավելի մեքենայացված խաղ	4		
ե)	մինչև 3 կենդանի խաղ	3		
զ)	3 կենդանի խաղից մինչև 10 կենդանի խաղ	4		
է)	10-ից ավելի կենդանի խաղ	5		
5. իրականացվող շահումով խաղի մեկ տոմսի և (կամ) խաղանիշի (ծեռոնի) և (կամ) միավորի գինն ըստ շահումով խաղերի կազմակերպման և անցկացման կանոնակարգի				
ա)	մեքենայացված խաղերի համար՝ առավելագույնը մինչև 10 դրամ	2	1	
բ)	մեքենայացված խաղերի համար՝ առավելագույնը մինչև 50 դրամ	3		
գ)	մեքենայացված խաղերի համար՝ 50 դրամից ավելի	4		
դ)	կենդանի խաղերի համար՝ առավելագույնը մինչև 10000 դրամ	3		
ե)	կենդանի խաղերի համար՝ առավելագույնը մինչև 50000 դրամ	4		
զ)	կենդանի խաղերի համար՝ 50000 դրամից ավելի	5		
6. խաղատրահում աշխատող անձանց թիվը				
ա)	մինչև 10 աշխատող	1	1	
բ)	11-ից մինչև 20 աշխատող	2		
գ)	21-ից մինչև 40 աշխատող	3		
դ)	40-ից ավել աշխատող	4		
7. խաղային բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտումները՝ նախորդ տարվա արդյունքներով				
ա)	խախտում չկա	1	1	
բ)	1 խախտում	2		
գ)	2 խախտում	3		
դ)	2-ից ավելի խախտում	4		
8. խաղային բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտումների պարբերականությունը՝ նախորդ տարվա արդյունքներով				
ա)	խախտում չկա	1	1	
բ)	նախորդ խախտման կատարումից անցել է 1 տարի	2		
գ)	նախորդ խախտման կատարումից անցել է 6 ամիս	3		
դ)	նախորդ խախտման կատարումից անցել է 3 ամիս	4		
9. խաղային բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտումների վերացմանն ուղղված գործողությունները՝ նախորդ տարվա արդյունքներով				

ա)	վերացրել է խախտման հայտնաբերումից անմիջապես հետո՝ մինչև ՀՀ ֆինանսների նախարարության կողմից խախտումը վերացնելու համար ժամկետ սահմանելը	1	1	
բ)	վերացրել է խախտումը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից խախտումը վերացնելու համար սահմանած ժամկետում	2		
գ)	վերացրել է խախտումը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից խախտումը վերացնելու համար սահմանած ժամկետից ուշ	3		
դ)	չի վերացրել խախտումը	4		
10. առևտրական հազվեցվածությունը				
ա)	գերհազվեցած է (ապահովված է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից ավելին, ՀՀ օրենսդրությամբ պահանջվող հաշվետվությունները ներկայացնում է էլեկտրոնային եղանակով)	1	1	
բ)	հազվեցած է (ապահովված է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները)	2		
գ)	թերհազվեցած է (մասնակի է ապահովված ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները)	3		
դ)	բացակայում է (չի ապահովված ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները)	4		
11. Խաղանիշերի (միավորների) վաճառքի և հետ գնման տարբերակները				
ա)	վաճառքը և հետ գնումը կատարվում է կանխիկ	1	2	
բ)	վաճառքը և հետ գնումը կատարվում է բանկային փոխանցումով	1		
գ)	վաճառքը կատարվում է բանկային փոխանցումով, իսկ հետ գնումը՝ կանխիկ	3		
դ)	վաճառքը կատարվում է կանխիկ, իսկ հետ գնումը՝ բանկային փոխանցումով կամ չեկով	5		
12. Խրականացվող ծառայությունների տարբերակները				
ա)	<<բինգո>> խաղ	1	2	
բ)	մեքենայացված խաղեր	2		
գ)	կենդանի խաղ՝ ընդդեմ խաղատան	3		
դ)	կենդանի խաղ՝ խաղացողների միջև	3		
ե)	կենդանի խաղի մրցույթներ	3		
զ)	խաղացողներ ներգրավելու նպատակով տուրիստական ուղևորությունների կազմակերպում	3		

է)	ՎԻՊ սենյակի (սենյակների) առկայություն	4		
13. խաղացողների վերաբերյալ տեղեկատվությունը				
ա)	ոչ ռեզիդենտներ ոչ ռիսկային երկրներից	1	2	
բ)	մեծ խաղադրույքներով խաղացողներ	3		
գ)	ոչ ռեզիդենտներ՝ օվշորային կամ ՓԼԱՖ-ի տեսանկյունից բարձր ռիսկային երկրներից	4		
դ)	հանցավոր անցյալ ունեցող խաղացողներ	5		
14. Կազմակերպչի գործունեության գովազդումը				
ա)	խաղասրահի արտաքին ցուցանակների միջոցով	1	1	
բ)	ճանապարհային պաստառների միջոցով	2		
գ)	մամուլի միջոցով	3		
դ)	ինտերնետ կայքերի միջոցով	4		
ե)	ռադիոյի միջոցով	4		
զ)	հեռուստատեսության միջոցով	5		
է)	այլ մեթոդով	3		
15. ՓԼ/ԱՖ-ի դեմ պայքարի տեսանկյունից ուսուցանվող աշխատողները				
ա)	ուսուցանվում են բոլոր աշխատողները, բացի սպասարկող անձնակազմից	1	3	
բ)	ուսուցանվում են հաճախորդների հետ շփվող աշխատողները	2		
գ)	ուսուցանվում են ղեկավար պաշտոններ զբաղեցնող անձինք (տնօրեն, փոխտնօրեն, հաշվապահ, ՖԼԱՖ-ի կախարգեղման պատասխանատու անձր)	3		
դ)	չեն ուսուցանվում	5		
16. ՓԼ/ԱՖ-ի դեմ պայքարի տեսանկյունից ուսուցանման մեթոդները				
ա)	սեմինարների, դասընթացների, աշխատանքային հանդիպումների, այլ համանման մեթոդներ	2	2	
բ)	ինքնուրույն	3		
գ)	չեն ուսուցանվում	5		
17. ՓԼ/ԱՖ-ի դեմ պայքարի տեսանկյունից աշխատողների միջին ուսուցանման հաճախականությունը				
ա)	տարին մեկից ավել անգամ	1	2	
բ)	տարին մեկ	2		
գ)	երբ ընդունվում է նոր աշխատող՝ միայն այդ աշխատողի մասով	3		
դ)	տարին մեկ անգամից էլ քիչ	3		
ե)	ոչ մի անգամ	5		
18. ՓԼ/ԱՖ-ի դեմ պայքարի տեսանկյունից ներքին աուդիտ իրականացնող անձր				
ա)	համապատասխան մասնագիտացված գործունեություն	1	3	

	իրականացնող իրավաբանական անձ		
բ)	համապատասխան մասնագիտացված գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ (անհատ ձեռնարկատեր)	2	
գ)	Կազմակերպչի աշխատակից	4	

>>:

Հավելված 2
 Հայաստանի Հանրապետության
 ֆինանսների նախարարի
 2013 թվականի հուլիսի 19-ի
 N 594-Ն - Ա հրամանի

<< Հավելված 3
 Հայաստանի Հանրապետության
 ֆինանսների նախարարի
 2012 թվականի հունվարի 18-ի
 N 39- Ա հրամանի

ԱՂՅՈՒՍԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՀԱՆՁՆԵՐԻ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՎԻՃԱԿԱՆԱՂԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ, ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐ ԲԱԼԵՐԻ ՉԱՓԵՐԻ ԵՎ ԲԱԼԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԿԱՅՔԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՂ

N	Ռիսկի աստիճանը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը և դրանց սահմանները	Ռիսկի աստիճանը որոշող չափանիշների սահմանները (1-5)	Ռիսկի աստիճանը որոշող չափանիշների կշիռը (1-3)	Ռիսկի աստիճանը (բալ) (3-րդ սյունակ X 4-րդ սյունակ)
1	2	3	4	5
1. նախորդ տարվա արդյունքներով շրջանառությունը				
ա)	մինչև 500 մլն.	1	3	
բ)	500 մլն-ից ավել մինչև 1 մլրդ.	2		
գ)	1 մլրդ-ից ավել մինչև 3 մլրդ.	3		
դ)	3 մլրդ.-ից ավելի	4		
2. կազմակերպվող վիճակախաղի տեսակները				
ա)	ոչ խաղարկությունով	4	2	
բ)	խաղարկությունով	5		
գ)	համակցված	5		
դ)	տոտալիզատոր	3		
3. կազմակերպվող վիճակախաղերի քանակը				
ա)	1 հատ	1	1	
բ)	մինչև 3 հատ	2		
գ)	մինչև 5 հատ	3		
դ)	5-ից ավելի	4		
4. վիճակախաղի անցկացման հաճախականությունը				
ա)	6 ամիսը մեկ կամ ավելի ուշ	1	1	
բ)	ամիսը մեկ անգամ	2		
գ)	շաբաթը 1 անգամ	3		
դ)	յուրաքանչյուր օր 1 անգամ	4		
ե)	1 օրվա ընթացքում 1-ից ավելի	5		
5. կազմակերպվող տոտալիզատորի բուքմեյքերական կետերի քանակը				

ա)	մինչև 20 կետ	1	2	
բ)	21-ից մինչև 40 կետ	2		
գ)	41-ից մինչև 80 կետ	3		
դ)	81-ից մինչև 100 կետ	4		
ե)	100 կետից ավելի	5		
6. աշխատող անձանց թիվը				
ա)	մինչև 20 աշխատող	1	1	
բ)	20-ից մինչև 40, աշխատող	2		
գ)	40-ից մինչև 80 աշխատող	3		
դ)	80-ից ավել աշխատող	4		
7. վիճակախաղերի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտումները՝ նախորդ տարվա արդյունքներով				
ա)	խախտում չկա	1	1	
բ)	1 խախտում	2		
գ)	2 խախտում	3		
դ)	2-ից ավելի խախտում	4		
8. վիճակախաղերի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտումների պարբերականությունը՝ նախորդ տարվա արդյունքներով				
ա)	խախտում չկա	1	1	
բ)	նախորդ խախտման կատարումից անցել է 1 տարի	2		
գ)	նախորդ խախտման կատարումից անցել է 6 ամիս	3		
դ)	նախորդ խախտման կատարումից անցել է 3 ամիս	4		
9. վիճակախաղերի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտումների վերացմանն ուղղված գործողությունները՝ նախորդ տարվա արդյունքներով				
ա)	վերացրել է խախտման հայտնաբերումից անմիջապես հետո՝ մինչև ՀՀ ֆինանսների նախարարության կողմից խախտումը վերացնելու համար ժամկետ սահմանելը	1	1	
բ)	վերացրել է խախտումը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից խախտումը վերացնելու համար սահմանած ժամկետում	2		
գ)	վերացրել է խախտումը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից խախտումը վերացնելու համար սահմանած ժամկետից ուշ	3		
դ)	չի վերացրել խախտումը	4		
10. տեխնիկական հագեցվածությունը				
ա)	վիճակախաղի կազմակերպման գործընթացն իրականացվում է ամբողջության էլեկտրոնային եղանակով՝ արդի տեխնիկայով, ՀՀ օրենսդրությամբ պահանջվող հաշվետվությունները ՀՀ	1	1	

	օրենսդրությամբ ընձեռնված հնարավորությունների սահմաններում ներկայացնում է էլեկտրոնային եղանակով			
բ)	վիճակախաղի կազմակերպման գործընթացն իրականացվում է ամբողջությամբ էլեկտրոնային եղանակով	2		
գ)	վիճակախաղի կազմակերպման գործընթացն իրականացվում է հիմնականում էլեկտրոնային եղանակով	3		
դ)	վիճակախաղի կազմակերպման գործընթացն իրականացվում է մասամբ էլեկտրոնային եղանակով	4		
ե)	վիճակախաղի կազմակերպման գործընթացն չի իրականացվում էլեկտրոնային եղանակով	5		
11. խաղադրույքների կատարման, տոմսերի վաճառքի և շահումների տրամադրման տարբերակները				
ա)	խաղադրույքների կատարումը, տոմսերի վաճառքը և շահումների տրամադրումը կատարվում է կանխիկ	1	2	
բ)	խաղադրույքների կատարումը, տոմսերի վաճառքը և շահումների տրամադրումը կատարվում է բանկային փոխանցումով	1		
գ)	խաղադրույքների կատարումը և տոմսերի վաճառքը կատարվում է բանկային փոխանցումով, իսկ շահումների տրամադրումը՝ կանխիկ	3		
դ)	խաղադրույքների կատարումը և տոմսերի վաճառքը կատարվում է կանխիկ, իսկ շահումների տրամադրումը՝ բանկային փոխանցումով կամ չեկով	5		
12. վիճակախաղի մասնակիցների վերաբերյալ տեղեկատվությունը				
ա)	ոչ ռեզիդենտներ ոչ ռիսկային երկրներից	1	2	
բ)	մեծ գումարներով վիճակախաղի մասնակիցներ	3		
գ)	ոչ ռեզիդենտներ՝ օվշորային կամ ՓԼԱՖ-ի տեսանկյունից բարձր ռիսկային երկրներից	4		
դ)	հանցավոր անցյալ ունեցող վիճակախաղի մասնակիցներ	5		
13. Կազմակերպչի գործունեության գովազդումը				
ա)	շինությունների արտաքին ցուցանակների միջոցով	1	1	
բ)	ճանապարհային պաստառների միջոցով	2		

գ)	մամուլի միջոցով	3		
դ)	ինտերնետ կայքերի միջոցով	4		
ե)	ռադիոյի միջոցով	4		
զ)	հեռուստատեսության միջոցով	5		
է)	այլ մեթոդով	3		
14. ՓԼ/ԱՖ-ի դեմ պայքարի տեսանկյունից ուսուցանվող աշխատողները				
ա)	ուսուցանվում են բոլոր աշխատողները, բացի սպասարկող անձնակազմից	1	3	
բ)	ուսուցանվում են հաճախորդների հետ շփվող աշխատողները	2		
գ)	ուսուցանվում են ղեկավար պաշտոններ զբաղեցնող անձինք (տնօրեն, փոխտնօրեն, հաշվապահ, ՖԼ/ԱՖ-ի կախարգելման պատասխանատու անձը)	3		
դ)	չեն ուսուցանվում	5		
15. ՓԼ/ԱՖ-ի դեմ պայքարի տեսանկյունից ուսուցանման մեթոդները				
ա)	սեմինարների, դասընթացների, աշխատանքային հանդիպումների, այլ համանման մեթոդներ	2	2	
բ)	ինքնուրույն	3		
գ)	չեն ուսուցանվում	5		
16. ՓԼ/ԱՖ-ի դեմ պայքարի տեսանկյունից աշխատողների միջին ուսուցանման հաճախականությունը				
ա)	տարին մեկից ավել անգամ	1	2	
բ)	տարին մեկ	2		
գ)	երբ ընդունվում է նոր աշխատող՝ միայն այդ աշխատողի մասով	3		
դ)	տարին մեկ անգամից էլ քիչ	3		
ե)	ոչ մի անգամ	5		
17. ՓԼ/ԱՖ-ի դեմ պայքարի տեսանկյունից ներքին աուդիտ իրականացնող անձը				
ա)	համապատասխան մասնագիտացված գործունեություն իրականացնող իրավաբանական անձ	1	3	
բ)	համապատասխան մասնագիտացված գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ (անհատ ձեռնարկատեր)	2		
գ)	Կազմակերպչի աշխատակից	4		

>>: